

**«Նյարդաբանություն, հոգեբուժություն և թմրաբանություն» առարկաներից
Ասպիրանտուրայի ընդունելության քննական հարցաշար**

1. Մարդու շարժական համակարգը: Կամային և ոչ կամային շարժումների կազմակերպումը:
2. Բրգային ուղղու ախտահարման համախտանիշները տարբեր մակարդակներում: Դիաշիզի հասկացությունը:
3. Կենտրոնական և ծայրամասային պարալիզ: Ախտահարման մակարդակով պայմանավորված պարալիզի տեսակները:
4. Ալտերնացիոն համախտանիշներ. հիմնական տեսակները (Վալենբերգ - Զախարչենկոյի, Միյար - Գուբլերի, Ֆովիլի, Ջեկսոնի):
5. Ակինետիկո-ռիզիտ համախտանիշ (Պարկինսոնի համակտանիշ): Պատճառագիտությունը, ախտածնությունը, բուժումը:
6. Հիմնական հիպերկինեզները՝ խորեա, աթետոզ, միոկլոնիաներ, տիկեր: Պաթոֆիզիոլոգիան, կլինիկան, բուժումը:
7. Խորեան: Պատճառաախտածնությունը, կլինիկան, բուժումը:
8. Ուղեղիկը, դրա դերը շարժման կազմակերպման մեջ: Ախտորոշման ուղեղիկային փորձերը:
9. Ատաքսիաները. տեսակները, պաթոֆիզիոլոգիան:
10. Սենսիտիվ ատաքսիան: Պատճառաախտածնությունը, որ հիվանդությունների ժամանակ է դիտվում:
11. Ուղեղիկի ախտահարման համախտանիշները: Կամուրջ – ուղեղիկային անկյան ախտահարման համախտանիշը:
12. Ողնուղեղի ընդլայնական կտրվածքը գոտկային հաստուկի մակարդակում:
13. Ողնուղեղի ընդլայնական կտրվածքը պարանոցային հաստուկի մակարդակում:
14. Ողնուղեղի երկայնաձիգ կառուցվածքը: Ողնուղեղի թաղանթները: Հետին նյարդաբանատների ախտահարման համախտանիշները:
15. Կոնքի օրգանների ֆունկցիայի կարգավորումը: Միզարձակման խանգարման տիպերը:
16. Տետղական ուղին: Տարբեր մակարդակներում ախտահարման համախտանիշները: Հեմիանոպսիաների տիպերը:
17. Ճակատային բիլթը: Անատոմիան, ֆունկցիաները, ախտահարման համախտանիշները:
18. Քունքային բիլթը: Անատոմիան, ֆունկցիաները, ախտահարման համախտանիշները:
19. Խոսքի խանգարման տեսակները (աֆազիա, դիզարտրիա, դիզֆոնիա), ախտահարման տեղակայումը:
20. Զգացողությունը. անատոմիան, ախտահարման մակարդակով պայմանավորված համախտանիշները: Զգացողության խանգարման տեսակները:
21. Զգացողության խանգարման տեսակները (պարեսթեզիա, հիպերպաթիա, դիսոցիացիոն, մոնո-պոլիներոպաթիկ):
22. Ակնաշարժ խանգարումները:
23. Վեստիբուլյար նյարդը: Ախտահարման ախտաբանությունը:
24. Ներքին պատիճի կառուցվածքը: Ախտահարման համախտանիշը:
25. Բուլբար (կոճղեզային), պսևդոբուլբար (կեղծ կոճղեզային) համախտանիշ: Անատոմիան, կլինիկան:
26. Վեգետատիվ նյարդային համակարգը: Անատոմիան և ֆիզիոլոգիան:

27. Վեգետատիվ նյարդային համակարգի ախտահարման հիմնական համախտանիշները:
28. Հիպոթալամիկ համախտանիշները. կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
29. Կլոդ-Բերնար-Հորների համախտանիշը: Ախտահարման տարբեր մակարդակները:
30. Ծայրամասային նյարդի կառուցվածքը: Նյարդային իմպուլսի անցկացման ֆիզիոլոգիան: Միելինի և քսոնի կառուցվածքը և ֆունկցիան:
31. Եռորյակ նյարդի անատոմիան և ախտահարման կլինիկան:
32. Նստային նյարդի անատոմիան: Տարբեր մակարդակներում ախտահարումը:
33. Բազկային հյուսակի ախտահարման համախտանիշները:
34. Ողնաշարի ախտահարման համախտանիշներն օստոխոնդրոզի և սպոնդիլիտների ժամանակ:
35. Ողնաշարի օստոխոնդրոզի կոմպրեսիոն համախտանիշները:
36. Նյարդային համակարգի վերտեբրոգեն հիվանդությունների բուժման սկզբունքները:
37. Ողնաշարա-շարժիչ սեգմենտի անատոմո-ֆունցիոնալ կառուցվածքը:
38. Սուր գլխացավի համախտանիշները:
39. Միգրեն: Պատճառաախտաճնությունը, կլինիկան, բուժումը:
40. Միգրեն: Հասարակ, դասական:
41. Սուր գլխացավը: Տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:
42. Առաջնային գլխացավերը: Տեսակները, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:
43. Եռորյակ նյարդի ներալգիան: Պատճառաախտաճնությունը, տարբերակիչ ախտորոշումը, կլինիկան, բուժումը:
44. Գլխացավի տեսակները: Տարբերակիչ ախտորոշումը: Լարվածության գլխացավերի բուժման ժամանակակից սկզբունքները:
45. Գիյեն-Բարեյի սուր պոլինեյրոպաթիան: Պատճառաախտաճնությունը, տարբերակիչ ախտորոշումը, կլինիկան, բուժումը:
46. Դիմային նյարդի մոնոնեյրոպաթիան: Պատճառագիտությունը, կլինիկան, բուժումը:
47. Սուր և քրոնիկ պոլինեյրոպաթիաների տեսակները (ինֆեկցիոն-ալերգիկ, դիաբետիկ, ինտոքսիկացիոն): Տարբերակիչ ախտորոշումը և բուժումը:
48. Նյարդային համակարգի ախտահարումը ռևմատիզմի ժամանակ:
49. Նյարդային համակարգի ախտահարումը համակարգային կարմիր գայլախտի ժամանակ: Կլինիկան, ախտաճնությունը, բուժումը, կանխարգելումը:
50. Նեյրոինֆեկցիաների դասակարգումը:
51. Մենինգոկոկային մենինգիտը: Կլինիկան, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:
52. Պալարախտային մենինգիտը: Կլինիկան, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:
53. Մենինգոկոկային ինֆեկցիան: Վարակման ուղիները, կլինիկական արտահայտությունները, նյարդային համակարգի ախտահարման համախտանիշները: Միկրոկենսաբանական ախտորոշումը, բուժումը: Բարդությունները մենինգիտի տարբեր փուլերում:
54. Մենինգյալ համախտանիշ: Պատճառները, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Հիպերտենզիոն համախտանիշի հետ տարբերակիչ ախտորոշումը:
55. Վիրուսային էնցեֆալիտները: Վիրուսոլոգիան, կլինիկան, տարբերակիչ ախտորոշումը, ելքը,բուժումը:
56. Հիպերտենզիոն համախտանիշը: Ախտորոշումը,բուժումը:
57. Հիդրոցեֆալիայի հիմնական տեսակները և պատճառները:
58. Գլխուղեղ-ողնուղեղային հեղուկը: Կազմավորումը: Ախտահարման տեսակները: Ողնուղեղային պունկցիայի մեթոդիկան, ցուցումները, հակացուցումները:
59. Գլխուղեղ-ողնուղեղային հեղուկը նորմայում և ախտաբանությունում:

60. Գլխուղեղի անոթային համակարգի անատոմիան: Ներքին քնային զարկերակային և վերտեքրո-բազիլյար ավազանների համակարգերը: Վիլիզյան օղակը: Արյան շրջանառության խանգարումները. դասակարգումը, պատճառագիտությունը, ռիսկի գործոնները:
61. Իշեմիկ և հեմոռագիկ ինսուլտների կանխարգելման և բուժման ժամանակակից մոտեցումները:
62. Իշեմիկ ինսուլտը: Պատճառագիտությունը, ախտածնությունը, ախտահարման ավազանով պայմանավորված կլինիկան (ներքին քնային զարկերակի և վերտեքրո-բազիլյար ավազան): Ախտորոշումը, բուժումը:
63. Հեմոռագիկ ինսուլտը: Պատճառագիտությունը, ախտածնությունը, կլինիկան: Սուբարախնոիդալ արյունազեղումը: Կլինիկան, բուժումը, սուր և հեռակա բարդությունները:
64. Ներուղեղային արյունազեղում: Պատճառաախտածնությունը, կլինիկան, բուժումը:
65. Արյան շրջանառության անցողիկ խանգարումները: Պատճառաախտածնությունը, կլինիկան, կախված ավազանից (ներքին քնային զարկերակի և վերտեքրո-բազիլյար): Արյան շրջանառության կայուն խանգարման կանխարգելումը:
66. Արյան շրջանառության քրոնիկ խանգարումները: անոթային էնցեֆալոպաթիան: Զարգացման փուլերը:
67. ԿԱՍ: Պատճառագիտությունը, ախտածնությունը, տարբերակիչ ախտորոշումը ԿԱՍ-ի համախտանիշների հետ:
68. ԿԱՍ: Պատճառագիտությունը, ախտածնությունը, բուժումը:
69. Միասթենիան: Պատճառաախտածնությունը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը: Իմունային բուժման հիմնական սկզբունքները:
70. Միասթենիան և Լամբերտ – Իտոնի միասթենիկ համախտանիշը: Պատճառագիտությունը, ախտածնությունը, բուժումը:
71. Ցրված սկլեռոզը: Ապամիելինիզացնող գործընթացի պատճառաախտածնությունը: Կլինիկան, ախտորոշման հիմնական չափանիշները: Բուժումը:
72. Ցրված սկլեռոզը: Պատճառագիտությունը, կլինիկական ձևերը, բուժումը:
73. Էպիլեպսիան: Պատճառաախտածնությունը, բնորոշումը, ախտորոշումը, բուժումը:
74. Էպիլեպտիկ նոպաների դասակարգումը. պարցյալ և տարածուն (գեներալիզացված) նոպաների տեսակները, ախտորոշման չափանիշները:
75. Բարձրագույն կեղևային գործունեության խանգարման համախտանիշները: Աֆազիաները, հիշողության, հաշվի, գրելու խանգարումները:
76. Գիտակցության սուր խանգարման տեսակները:
77. Ներհիմնական համախտանիշը. կլինիկան, ախտորոշումը և բուժումը:
78. Ժամանակակից ախտորոշիչ մեթոդների դերն անոթային նյարդաբանության մեջ:
79. ԷՈԻԳ (ննթ) սկզբունքները, տեսակները, հիմնական ցուցումները և հնարավորությունները:
80. ԷՆՄԳ-ն, ուղեղի հարուցված պոտենցյալները՝ սկզբունքները, տեսակները, հիմնական ցուցումները և հնարավորությունները:
81. Շարժիչ նեյրոնների հիվանդությունները: Կողմնային ամիոտրոֆիկ սկլեռոզ:
82. Դեմենցիա: Տարբերակիչ ախտորոշումը: Ալցհեյմերի հիվանդությունը և դեմենցիայի այլ տեսակները:
83. Պարկինսոնյան հիվանդությունը: Կլինիկան, տարբերակիչ ախտորոշումն ու բուժումը:
84. Միոպաթիան: Հիմնական տեսակները, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
85. Ախտորոշիչ մեթոդները նյարդաբանությունում:
86. Սուբարախնոիդալ արյունազեղումը: Կլինիկան, ախտորոշումը, բուժման տեսակները:

87. Ուղեղի անոթային հիվանդությունների դասակարգումը: Պատճառաախտաճնությունը:
88. Հակացնցումային դեղամիջոցները: Էպիլեպսիայի տարբեր տեսակների դեղորայքային բուժումը:
89. Հենտինգտոնի հիվանդությունը: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
90. Առաջնային և կրկնակի ինսուլտների կանխարգելումը:
91. Սուր հիպերտենզիոն էնցեֆալոպաթիան: Կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
92. Գլխապտույտը: Տարբերակիչ ախտորոշումը:
93. Ֆրիդրայխի ատաքսիան և ժառանգական ատաքսիաների մյուս տեսակները:
94. Դիմային նյարդի իդիոպաթիկ մոնոնեյրոպաթիան (Բելլի համախտանիշը): Բուժումը:
95. Նյարդա - մկանային հաղորդականության խանգարումները: Միասթենիա գրավիս և միասթենիկ համախտանիշները: Կլինիկան, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:
96. Պարկինսոնիզմը: Պատճառագիտական գործոնները: Տարբերակիչ ախտորոշումը:
97. Թուրետի համախտանիշը:
98. Նեյրոսիֆիլիսը:
99. Տրանզիտոր իշեմիկ գրոհը: Տարբերակիչ ախտորոշումը: Կանխարգելումը:
100. Գլխացավի հազվագյուտ տեսակները:
101. Արջիլ-Ռոբերտսոնի համախտանիշը: Առաջացման մեխանիզմը, ինչպիսի հիվանդությունների դեպքում դիտվում:
102. Դիաբետիկ պոլինեյրոպաթիան. պատճառաախտաճնությունը, բուժումը:
103. Ցրված սկլեռոզի բուժման ժամանակակից մոտեցումները: